ռաջին փորձը ցույց տվեց այդ կարևոր նախաձեռնության օգտակարությունը։

Ժողտնտխորհի նիստերը անմիջականորեն ռեսպուբլիկայի արդյունաբերական շրջաններում, քաղաքներում ու ձեռնարկություններում և կառույցներում գումարելու, առաջ քաշվող հարցերի քննարկմանը տեղի հասարակությանը լայնորեն ընդգրկելու արժեքավոր նախաձեռնությունը պետք է ողջունել և հետագայում ավելի հաճախակի կիրառել։

ԻՆՉԻ ՎՐԱ Է ԱՇԽԱՏՈՒՄ ՀԱՅԱՐԴՆԱԽԱԳԻԾԸ

Ռեսպուբլիկական նախագծային ինստիտուտը՝ Հայարդնախագիծը զբաղվում է նոր գործարանների ու ֆաբրիկաների նախագծումով և գործարանների վերակառուցումով։ Ընթացիկ 1958 թվականին նրա կոլեկտիվի առաջ մեծ խնդիրներ են դրված։ Մշակված պլանի համաձայն, նա պետք է նախագծի ռեսպուբլիկայի արդյունաբերության բոլոր ճյուղերն ընդգրկող տասնյակ ձեռնարկություններ։ Հատկապես ինտենսիվ են կատարվում Հայաստանի համար բոլորովին նոր, այնպիսի ձեռնարկությունների նախագծման աշխատանքները, ինչպիսիք են՝ Երևանի կիսահաղորդիչների և մետաղակերամիկական, Սևանի էլեկտրամեկուսացման ապակե գործվածքի, Երևանի սարքաշինական, Կիրովականի ացետատային մետաքսի, Լոսավանի հաստոցաշինական, Սևանի ռեդուկտորների արտադրության, Լենինականի միկրոէլեկտրաշարժիչների, Կիրովականի փոքրադաբարիտ դերճշգրիտ հաստոցների և մի շարք այլ գործարաններ։

Երևանի առաջիկա գազիֆիկացման կապակցությամբ արդեն այս տարի նախատեսվում է ավարտել մայրաքաղաքի 52 ձեռնարկությունների արդյունաբերական վառարաններն ու կաթսայատները գազային վառելյուղի փոխադրելու նախագծումը։ Հաշվի առնելով ստացվելիք գազի բարձր կալորիականությունը (8000 կկալ/նմ³), նախագծողները կաթսայատների ու վառարանների հրածորաններն ընտրում են ստացվելիք գազի պարամետրերին համապատասխան։

Շարունակվում է աշխատանքը արևի ջերմակայան նախագծելու ուղղությամբ։ Նախագծողների գլխավոր ուշադրությունը բևեռված է եզակի արտացոլիչ հորինելու, հայելիների պտտումն ավտոմատացնելու, արեգակնային կաթսան կառուցելու վրա։

Մինչև տարվա վերջը Հայարդնախագծի աշխատակիցները կավարտեն Կիրովականի տրիկոտաժի ֆաբրիկայի վերակառուցման նախագծումը, ավելացնելով նրա կարողությունը 7—8 անգամ։ Ավարտվելու է նաև Արզնիի ապակե տարայի, էջմիածնի պլաստմասսաների և այլ գործարանների վերակառուցման նախագծումը։ Հիմնավորապես վերակառուցվում է Երևանի մեխանիկական գործարանը, որը հարմարեցվելու է գազային ապարատուրա արտադրելու համար։ Ավարտվում են Երևանի խրոմպիկի գործարանի վերակառուցումը նախագծելու ուղղությամբ կատարվող աշխատանքները։ Այստեղ տեղադրվելու են կոնվեյերներ, էլևատորներ, շնեկներ, ավտոմատ կշեռքներ՝ դոզատորներ, ֆիլտրամամլիչներ և այլ ապարատներ, որոնց միջոցով կմեքենայացվեն բոլոր աշխատատար պրոցեսները։